## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ: Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի հրավիրած հանրաժողովում Ղափանի ներկայացուցիչ, օրերս կալանքից ազատված Համլետ Քոչարյանը նյութերով ու տվյալներով ջախջախեց տնտեսապես անկախ Հայաստանի խորհրդային ,,հիմնավորումը,, և ներկայացրեց բացահայտ թալանի այն ոճրագործ պատկերը, որ իրականացվում է Մոսկվայի կողմից Հայաստանի ընդերքի հարստության նկատմամբ:

Հանրաժողովում ելույթ ունեցողներից մի քանիսը պահանջեցին Սումգայիթի եղեռնագործության դատավարությունը հանձնել Հաագայի միջազգային դատարանին:

---

Ինքնորոշում թերթ. 1 դեկտեմբերի 1988 թվական, էջ 23